

**Կարինե Ալբերտի Եղիազարյան
(Երևան, Հայաստան)**

ԱՐՇԱՎԱՆՄԲԵՐԸ ՈՐՊԵՍ ԱԶՏԱԳՐԱԿԱՆ ՊԱՅՔԱՐԻ ՅՈՒՐԱՀԱՏՈՒԿ Ձև

Զինված արշավախմբերը նկատելի դերակատարություն են ունեցել հայոց ազատամարտի որոշակի փուլերում՝ նպաստելով Հայկական հարցի վրա Եվրոպական երկրների ուշադրության գրավմանը, ինչպես նաև որոշ չափերով թեթևացնելով արևմտահայերի նկատմամբ սահմանամերձ շրջանների քրդական ցեղերի գործած բռնությունները: Պատահական չէ, որ ժամանակ առ ժամանակ արշավախմբերը հայտնվել են ՀՅ Դաշնակցության կողմից առաջ քաշված մարտավարական ծրագրերի կիզակետում: ՀՅԴ գործիչները քաջ գիտակցում էին, որ փոքրաթիվ ուժերով հնարավոր չէ պայքարել թուրք-քրդական ուժերի դեմ, և այս մարտախմբերը մեծամասամբ ձախողվելու են: Նրանց նպատակը պետք է լիներ ռուս-թուրքական սահմանի վրա խլրտումներ առաջացնելն ու թուրքական իշխանությունների հայահալած քաղաքակրթությունը կասեցնելը, միաժամանակ եվրոպական երկրների ուշադրությունը Հայկական հարցի վրա բևեռելը: Հարկ ենք համարում այստեղ որոշակիացնել մեկ խնդիր: Պատմագիտական գրա-կանության մեջ հաճախ շփոթություն կա զինատար խումբ, հայդուկային խումբ, մարտական խումբ և արշավախումբ հասկացությունների հարցում: Նկատվում է դրանք նույնացնելու միտում: Մինչդեռ դրանցից յուրաքանչյուրն, այդ թվում նաև արշավախմբերը, նմանություններով հանդերձ, զինյալ պայքարի տարբեր ձևեր են: Որպես պայքարի առանձին ձև, արշավախումբն ունի բնութագրիչ հետևյալ գծերը.

1) Այն պետք է պարտադիր կազմակերպվեր տվյալ պետությանը սահմանակից որևէ պետության տարածքից: Արևմտահայության պարագայում, բնականաբար, հենակետի դեր կարող էին խաղալ Պարսկաստանը և Ռուսական կայսրության Կարսի մարզի ու Երևանի նահանգի տարածքները:

2) Անցնելով սահմանը, արշավախումբը պետք է լուծեր մարտական որոշակի խնդիր: Հետևաբար, նրա սահմանն անցնելը չէր կարող մինչև վերջ աննկատ մնալ թշնամու համար, որի հետ բախումն անխուսափելի էր: Մինչդեռ զինատար ու հայդուկային խմբերի համար, որպես կանոն, գերադասելի էր մինչև վերջ աննկատ մնալը:

Որպես զինյալ պայքարի առանձին ձև արշավախմբերը հայ իրականության մեջ օգտագործվել են բավականյան ժողովուրդների, առաջին հերթին բուլղարների, մղած պայքարի ազդեցությամբ: Արշավախմբերի մասնակիցները հիմնականում երիտասարդ հայրենասերներ էին, ովքեր լիովին գիտակցում էին իրենց գործողությունների նշանակությունը և վտանգավորությունը:

Դեռևս 1892 թ. առաջին ընդհանուր ժողովում ՀՅԴ-ն առաջ քաշեց մի շարք կարևոր հարցեր և առավել ուշադրություն դարձվեց արևմտահայությանը վերաբերող խնդիրներին: Ժողովում ընդունված առաջին ծրագրերում ՀՅԴ-ն հիմնական նպատակն էր հռչակում «ապստամբության միջոցով թիւքաց

Հայաստանի մէջ ձեռք բերել քաղաքական եւ տնտեսական ազատութիւն...>>⁸: Այդ նպատակը իրագործելու համար քննարկվեցին երեք կարևոր կետեր՝ հեղափոխության նպատակ, կազմակերպություն և տակտիկա: Իր առջև դրված գլխավոր նպատակը կյանքի կոչելու համար որոշվեց՝ «Կազմակերպել մարտական խմբեր, յատկապէս պարապիլ անոնց հետ վերոյիշեալ խնդիրների գործով պատրաստել: Ամեն միջոց ի գործ դնել ժողովուրդը զինելու... Կազմակերպել յեղափոխական կոմիտեներ եւ սերտ կապ հաստատել անոնց միջեւ»⁹:

ՀՅ Դաշնակցության 1896-1897 թթ.-ի Ռայոնական ժողովում նույնպէս, առաջնային խնդիրներից մեկը դարձավ մարտավարության մշակումը և առաջ քաշվեց Մեծ արշավանք կազմակերպելու գաղափարը, քանի որ հայդուկային խմբերը «<իրանց մանր-մունր յարձակումներով ու աղմուկներով չեն կարող Եւրոպայի ուշադրութիւնը գրավել չեն կարող ժողովրդից հեռու մնալ եւ կոտորածների ու բռնութիւնների առիթ չտալ»¹⁰:

Երկար քննարկումներից հետո, ի վերջո, ժողովը որոշեց. «<Վրէժստանում (Ատրպատական-Կ.Ե.) պատրաստի ոյժ (զենք եւ մարդիկ) պահել և յարմար դէպքում մեծ արշաւանք գործել սահմանից: Վրէժստանում արշավանքի անհրաժեշտ պատրաստութիւնները տեսնելուց յետոյ. աւելացած զենքը մի կերպ Շամ (Շամիր կամ Շամիրամ- Վասպուրական՝ Կ. Ե.) ուղարկել գոնէ տեղացիների ձեռքով»¹¹: Միաժամանակ ժողովը որոշվում է չոչնչացնել հայդուկային խմբերը՝ կարող են հարկ եղած դէպքում օգնություն ցույց տալ ժողովրդին: Այս դէպքում հարձակողական ձեռնարկները երկու կարևոր խնդիրների լուծմանն էին ուղղված.

1. Հայկական հարցի նկատմամբ պահպանել միջազգային դիվանագիտության ուշադրությունն ու հետաքրքրությունը՝ հնարավորության դէպքում ապահովելով միջամտություն:

2. Չնայած կիսագինադադարային այն իրավիճակին, որն առաջ է եկել սուլթանի ներկայացուցիչների հետ սկսած բանակցությունների հետևանքով, այդ ձեռնարկումները նպատակ ունեին բանակցությունների տեղապտույտի կամ անարդյունավետության դէպքում հակառակորդի վրա ճնշում գործադրելու միջոց հանդիսանալ վերջինիս հարկադրելով գնալ զիջումների¹²:

Թեև 1896-1897 թթ. ընդունված որոշումներն ու գործողությունները չտվեցին սպասված արդյունքները, այնուամենայնիվ, արշավախմբերի կազմակերպումը շարունակում է մնալ Դաշնակցության ծրագրային կարևոր հարցերից մեկը: Հասկանալով, որ 1896-1897 թթ. կիրառված «<զուգակցված

⁸ Նիլթեր Հ. Յ. Դաշնակցութեան պատմութեան համար, հ. Բ, Պէրլութ, 1985, էջ 14:

⁹ Նույն տեղում, էջ 15:

¹⁰ Պատմագրութիւն Հայ Յեղափոխական Դաշնակցութեան (քառահատոր շարք) նուիրում շ.Յ.Դ. 100 ամեակին, հրատ. Հ. Յ. Դաշնակցութեան Բիւրոյի, «<Յեղափոխական գրադարան» թիւ 8, Աթէնք, Ա. հատոր, 1990, էջ 357:

¹¹ Նիլթեր..., հ. Բ, էջ 31:

¹² Տե՛ս Գրիգորյան Հ., Հայ ազատագրական պայքարի մարտավարությունը 1895-1898 թթ., Երևան, 2002, էջ 55-56:

հարվածների>> կամ հարձակողական մարտավարությունն իրեն չի արդարացնում, 1898 թ. տեղի ունեցած ՀՅԴ երկրորդ ընդհանուր ժողովը կատարում է մարտավարական փոփոխություններ, կարևորելով նաև <<... ուժերու կենդրոնացումը երկրին մէջ, ցուցը Պօլիս եւ ծովեզերեայ քաղաքները, եւ մերժելով ֆէտայական ասպատակային գործունէութիւնը ընդունեց մարտական-զինամարզական խումբեր կազմակերպելու ծրագիրը>>¹³: Ժողովում որոշվեց որպէս կենտրոնացման վայր ընտրել Սասուն-Տարոնի (Բարձրավանդակ) շրջանը: Կազմակերպության հետ կապված նաև որոշվեց <<Վրէժստանի մօտ (300) երեք հարիւր հրացանները հաւասար կերպով բախշել Շամիրի, Շատախի եւ Սոկսի լեռնային մասերում կազմուելիք զինամարզական մարտական խումբերուն>>¹⁴: Դրանով Շատախ-Վասպուրականը դառնում էր ուժերի կենտրոնացման շրջան: Փաստորեն ՀՅԴ հրաժարվում է իր նախկին մարտավարությունից և որոշում ուժերը կենտրոնացնել Երկրի առավել նպաստավոր շրջաններում: Ինչ վերաբերում է արշավախմբերի կազմակերպմանը, ապա ժողովը որոշում է <<երկրէն դուրս կազմուած մարտական խումբերու եւ անոնց հետեւող կազմաւորումներու միջոցով սահմաններէն ակտիվ միջամտութիւն կատարուի՝ թէ իբր պաշտպանութիւն կամ օգնութիւն ընդհանուր գործին>>¹⁵: Հետագայում ևս կուսակցությունը չի հրաժարվում արշավախմբերի հարցում իր որդեգրած նման դիրքորոշումից: 1904 թ. (փետրվար-մարտ), Սոֆիայում հրավիրված, ՀՅԴ երրորդ ընդհանուր ժողովում նույնպէս, Սասունում ծավալվող իրադարձությունների հետ կապված, առաջադրվող խնդիրներից է դառնում արշավախմբերի կազմակերպման հարցը: Դա հիմանվորվում է նրանով, որ <<Արշավախմբեր կազմակերպելը համեմատաբար շատ դիւրին է: Կը կրթթէ մեր կռուողները եւ յառաջ կը բերէ փորձուած ուժեր: Մարսափ տարածէ եւ կ'սհաբեկէ թշնամին: Կը վնասէ թշնամիին, ենթարկելով համեմատաբար քիչ կորստի: Լաւուած կը պահէ թուրք կառավարութիւնը: Կենդանի կը պահէ Հայկ. Հարցը արտաքին աշխարհի մէջ: Չի ձգեր որ յեղափոխական ոգին թուլանալ, եւ գործերու անյաջողութեան պարագային հակազդեցութեան նոր հոսանքի սկսի:Միջոցկու տայ ճարելու: Կը զօրացնէ պրոպագանդի գործը>>¹⁶:

ՀՅԴ երրորդ ընդհանուր ժողովին անմիջապէս հաջորդեցին արշավախմբեր կազմակերպելու և Սասունին օգնություն հասցնելու գործընթացները: Սասունի 1904 թ. ապստամբության շրջանում իրար հետևից կազմակերպեցին մի շարք արշավախմբեր, որոնց մեծ մասը չհասան Սասուն: Ճանապարհին կոմիտեի թուրքական բանակի և քրդական ուժերի դեմ դրանք կամ ամբողջովին ոչնչացվեցին կամ հետ քաշվեցին դեպի Պարսկաստան և Կովկաս: Միայն 1903 թ. մայիսի 25-ից մինչև 1904 թ. հոկտեմբերի 29-ը Հ.Հ. Դաշնակցությունը Երկիր էր ուղարկել 11 մարտախմբեր, որոնց մեծ մասի նպատակն էր հասնել Սասուն,

¹³ Նիւթեր..., հ. Բ, էջ 59:

¹⁴ Նույն տեղում:

¹⁵ Նույն տեղում, էջ 60:

¹⁶ Նույն տեղում, էջ 116:

սակայն նրանց չուն՝ մեծամասամբ ձախողվել էր: Առաջինը Թորգոմի <<Մրրիկ>> խումբն էր, որը, դուրս գալով Գարսից, հաղթահարելով մեծ դժվարություններ, 1903 թ. ամռանն անվնաս հասավ Սասուն՝ բարձրացնելով ժողովրդի տրամադրությունը:

Այնուամենայնիվ, այդ խմբերի գործողությունները շարունակում են մնալ հայոց ազատամարտի կարևորագույն դրվագներից: Հետագայում, 1907 թ. ՀՅԴ չորրորդ ընդհանուր ժողովում լուրջ քննարկման առարկա դարձան Սասունի 1904 թ. ապստամբության և արշավախմբերի ձախողման պատճառներն ու դրանց հետևանքները: Ազատամարտի խնդիրները քննարկելուց հետո ժողովը կատարեց մի շարք մարտավարական փոփոխություններ, իսկ արշավախմբերի կազմակերպման հետ կապված ընդունեց հետևյալ որոշումը. <<Ապագայում մեր մղելիք կռուի մէջ, այլևայլ յեղափոդական ձեռնարկների հետ միասին արշավախմբերն եւս կարող են օգտակար լինել, երբ ներսի վարիչ մարմինները վստահ են, որ այդ խմբերը կը դարձնեն կռիւը ազդու, լայն եւ յարատեւ միջոցներ ձեռե՛ առնել՝ միլիցիայի սկզբունքով կամ այլ ձեւով, առանց վարձի, մարտական դաշնակցական խմբեր մարզել ապագայ այդօրինակ գործողութիւնների համար>>¹⁷:

Ըստ ՀՅԴ չորրորդ ընդհանուր ժողովի որոշման, խմբերը պետք է կազմված լինեն հետևյալ կերպ. <<Ամէն մէկ խումբ բաղկացած պիտի ըլլայ 10 մարտիկներէ: Իւրաքանչիւր մարտիկի պարտաւրութիւնն է ծանօթ ըլլալ Դաշնակցութեան ծրագիրն ու պատրաստ ծառայելու անոր իրականացման: Մարտիկ խումբերը կենթարկուին տեղական մարմնի պարտաւոր է ապրիլ սեփական աշխատանքով ունենալ սեփական զէնք եւ ի հարկին մտնել, իբրև կռուող, յեղափոխական ձեռնարկելու մէջ >>¹⁸:

Արշավախմբերի կազմակերպման հետ կապված պահպանել են բազմաթիվ արխիվային նյութեր, լիազորագրեր, նամակներ և փաստաթղթեր, որոնցից մեկում նշվում է որ. <<Արշավախմբերը պիտի կապուած լինեն շարժումների հետ և կատարուեն Երկրի պատշաճ մարմնի հրահանգներին համաձայն...: Այժմեանից անհրաժեշտ է միջոցներ ձեռք առնել՝ մարզելու մարտական խմբեր, միլիցիայի սկզբունքով (կազմուած), Կովկասում եւ Վրէժստանում, վարժեցնելով նրանց արշավաքների բոլոր դժվարութիւններին հետ>>¹⁹:

Չնայած Սասունի 1904 թ. ապստամբությունից հետո վերջ տրվեց դեպի Երկրի նոր արշավախմբերի կազմակերպումը, սակայն վերջիններս չեն դադարում իրենց ներդրումն ունենալ հայոց ազատամարտում: Անդրկովկասում բռնկված 1905-1906թթ. Հայ թաթարական ազագամիջյան բախումների շրջանում, մարտախմբերը շարունակում են մասնակցել բազմաթիվ ինքնապաշտպանական մարտերի Արևելյան Հայաստանի տարբեր շրջաններում:

¹⁷ Նիւթեր..., հ. Գ, էջ 303:

¹⁸ Նույն տեղում, էջ 345:

¹⁹ Նույն տեղում, հ. Դ, Պեյրուք, 1982, էջ 28: